

Բայց Վասպուրականի ժողովուրդը խաղաղութիւն վայելելու բախտը չունեցան. հազիւ թէ Գուրգէն երկիրը հանդարտեցուց, եւ ահա Գրիգոր Արծրունի, որ Բուղայի երկիւղէն Աբխազաց երկիրը փախած էր՝ վրացի զօրօք կը հասներ Վասպուրական հալածելու համար զգուրգէն եւ տիրանալու աշխարհին: Բայց իւր զօրքն իմացան եւ լսեցին թէ ի Նչախի մարդ էր Գուրգէն, չուզեցին պատերազմիլ եւ դարձան իրենց երկիրը: Եւ Գրիգոր այս տեսնելով՝ ուզեց բանազնացութեան մտնել Գուրգէնի հետ, որ առանց դժուարութեան յանձն առաւ երկիրը բաժնել իրենց մէջ:

Նոյն ժամանակները Արծրունի Աշոտ իշխանի որդի Վահան կ'ուզար Բաղդատայ եւ զօրք ժողուելով կը յարձակէր Ռշտունեաց Ոստանին վրայ, ուր կը նստէր Գուրգէն, եւ յաղթուած կորակոր կ'երթար պատմելու Բաղդատ ինչ որ գլուխը եկաւ:

Իսկ Գուրգէն իւր ուշադրութիւնը միայն տուած օտարաց, զարմանալի առաքինութեամբ եւ անյիշաչարութեամբ իւր ազգայնոց յանցանաց, հարուած հարուածի վրայ կը հասցներ Իսմայէլի որդւոց, ինչպէս կը պատմեն ժամանակին պատմիչք, եւ Յուդա Մակաբէ ու փրկիչ գնա կ'անուանեն:

Թեպէտ Գուրգէն շատ աւելի վեր էր ամէն գովութենէ՝ իւր անբաւ քաջութեանդ հետ ազնուական սիրտ մը պահելով, որ այդ ժամանակին մէջ անօրինակ էր, երբ ամէնքը եղբայր եղբօր դաւաճան կ'ելնէին անխիղճ եւ անամօթ:

Աշոտ Արծրունի իւր որդւոյն Գրիգոր Դերենիկի հետ Գուրգէն եղբայրը կ'ուղարկէր ամիրապետին հրամանաւ տիրելու Վասպուրականի եւ ի բաց վարելու զգուրգէն Ապուլպէճ, որ իմանալով թագաւորական հրովարտակը քաշուեցաւ Սրինգ եւ Ջլմար բերդերը՝ թողլով ամէն իշխանութիւն. եւ երբ տեսաւ թէ այդ բերդերը նաեւ շատ կը տեսնէին իրեն Արծրունիք՝ թողուց անոնք էլ, որ ազգային արիւն չի թափի եւ ելաւ փոքրիկ գնդով երթալու յունաց բաժինը: Իսկ Գուրգէն Արծրունի, առանց ամաչելու պատգամաւոր կ'ուղարկէր իւր անուանակցին առաջարկելով, որ չերթայ՝